ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 6. Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած հիմնական հասկացությունները

Քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

1) *դեպք* ՝ հանցագործության հատկանիշներ պարունակող իրադարձություն, որի կապակցությամբ իրականացվում է քրեական դատավարություն.

2) *քրեական գործ* ՝ քրեական հետապնդման մարմնի կամ դատարանի կողմից իրականացվող առանձին վարույթ՝ քրեական օրենսգրքով չթույլատրված մեկ կամ մի քանի ենթադրաբար կատարված արարքների կապակցությամբ.

3) *նյութեր* ՝ փաստաթղթեր և այլ առարկաներ, որոնք գործի բաղկացուցիչ մասն են կամ ներկայացված են գործին կցվելու համար, հաղորդումներ, ինչպես նաև փաստաթղթեր և այլ առարկաներ, որոնք կարող են նպաստել գործով վարույթի ընթացքում նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելուն.

4) *գործով վարույթ* ՝ քրեական դատավարական ընթացակարգ, որն սկսվում է քրեական գործի հարուցման հարցը լուծելիս և իր մեջ ներառում է գործով իրականացվող և ընդունվող դատավարական որոշումները և գործողությունները.

5) *քրեական գործով մինչդատական վարույթ* ՝ քրեական գործով վարույթը քրեական գործ հարուցելու հարցի լուծման պահից մինչև գործն ըստ էության քննելու համար դատարան ուղարկելը.

6) *դատավարական գործողություններ* ՝ գործով վարույթի ընթացքում սույն օրենսգրքով նախատեսված գործողություններ.

7) *դատավարական որոշումներ* ՝ քրեական դատավարության ընթացքում իրավասու մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ընդունվող՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումներ՝ դատավճիռներ, որոշումներ.

8) *դատավճիռ* ՝ դատական նիստում կայացված առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի որոշումները ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության, նրա նկատմամբ պատիժ կիրառելու կամ չկիրառելու և այլ հարցերով.

9) *որոշում* ՝ քրեական գործով դատարանի որոշումները, բացի դատավճռից, ինչպես նաև մինչդատական վարույթի ընթացքում հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կայացրած որոշումները.

10) *վերջնական որոշում* ՝ քրեական վարույթ իրականացնող մարմնի յուրաքանչյուր որոշում, որը բացառում է գործով վարույթն սկսելը կամ շարունակելը, ինչպես նաև լուծում է գործն ըստ էության.

10[1]) *գործն ըստ էության լուծող դատական ակտեր* ՝ առաջին ատյանի դատարանի դատավճիռ, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ

կիրառելու մասին որոշում, ինչպես նաև այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտեր, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանի դատական ակտերը.

11) *դատարան* ՝ օրենքով սահմանված կարգով կազմավորված դատարան, որը գործերը քննում է կոլեգիալ կազմով կամ միանձնյա. առաջին ատյանի դատարան, վերաքննիչ դատարան, վճռաբեկ դատարան.

12) *ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ առաջին ատյանի դատարան)*՝ դատարան, որն իրավասու է քննելու բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն իրականացնելու քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ.

13) *վերաքննիչ դատարան* ՝ դատարան, որը վերաքննության կարգով գործը քննում է վերաքննիչ բողոքի հիման վրա.

14) *վճռաբեկ դատարան* ՝ դատարան, որը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյան է և կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:

Վճռաբեկ դատարանը օրենքով նախատեսված դեպքերում գործը քննում է վճռաբեկ բողոքի հիման վրա.

15) *դատավոր* ՝ դատարանի նախագահ, դատարանի պալատի նախագահ, պալատի դատավոր, դատարանի այլ դատավոր.

16) *կողմ* ՝ մարմինները և անձինք, որոնք քրեական դատավարությունում մրցակցային հիմունքներով իրականացնում են քրեական հետապնդում կամ պաշտպանություն.

17) *քրեական հետապնդում* ՝ այն բոլոր դատավարական գործողությունները, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը.

18) *քրեական հետապնդման հարուցում* ՝ քրեական հետապնդման մարմնի որոշումն անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին.

19) *քրեական հետապնդման դադարեցում* ՝ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի որոշումը՝ առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին.

20) *մեղադրանք* ՝ սույն օրենսգրքով նախատեսված կարգով ներկայացված հիմնավորում՝ որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին.

21) *մեղադրանքի կողմ* ՝ քրեական հետապնդման մարմինները, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը և նրանց օրինական ներկայացուցիչներն ու ներկայացուցիչները.

22) *քրեական հետապնդման մարմիններ* ՝ դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը.

23) *դատախազ* ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրան ենթակա դատախազները, նրանց տեղակալները և օգնականները.

24) *մեղադրող* ՝ դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը.

25) *քննիչ* ՝ քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության, հարկային կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձ, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով կատարում է նախաքննություն.

26) *քննչական բաժնի պետ* ՝ քննչական կոմիտեի նախագահը և նրա տեղակալները, հատուկ քննչական ծառայության պետը և նրա տեղակալները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության, հարկային կամ մաքսային մարմինների քննչական վարչության, բաժնի, բաժանմունքի պետը և նրա տեղակալները, որոնք գործում են իրենց իրավասության սահմաններում.

26.1) *օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողներ* ՝Հանրապետության նախագահը, վարչապետը, փոխվարչապետները, պատգամավորները, Սահմանադրական դատարանի դատավորները, դատարանների դատավորները, նախարարները, նրանց տեղակալները, Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, վարչապետի աշխատակազմի ղեկավարը, Ոստիկանության պետը և նրա տեղակալները, Ազգային անվտանգության ծառայության տնօրենը և նրա տեղակալները, Պետական եկամուտների կոմիտեի նախագահը և նրա տեղակալները, մարզպետները, նրանց տեղակալները, Երևանի քաղաքապետը, նրա տեղակալները, Հաշվեքննիչ պալատի նախագահը և խորհրդի անդամները, Կենտրոնական բանկի խորհրդի անդամները, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, Վիճակագրական կոմիտեի ղեկավարը և անդամները.

26.2) *պետական ծառայություն իրականացնող անձ* ՝ դատախազները, քննչական կոմիտեի ծառայողները, ոստիկանության (բացառությամբ ոստիկանության զորքերի), ազգային անվտանգության (բացառությամբ սահմանապահ զորքերի և զինված ստորաբաժանումների), հարկային, մաքսային մարմինների, հարկադիր կատարումն ապահովող, քրեակատարողական և փրկարար ծառայությունների պաշտոնատար անձինք.

27) *հետաքննության մարմին* ՝ սույն օրենսգրքով հետաքննության իրավասություն ունեցող պետական մարմնի համապատասխան ստորաբաժանման պետը (այսուհետ՝ հետաքննության մարմնի պետ) և աշխատակիցները.

28) *պաշտպանություն* ՝ դատավարական գործունեություն, որն իրականացնում է պաշտպանության կողմը՝ նպատակ ունենալով հերքել մեղադրանքը կամ մեղմացնել պատասխանատվությունը, պաշտպանել այն անձանց իրավունքները և շահերը,

որոնց վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարումը, ինչպես նաև նպաստել ապօրինաբար քրեական հետապնդման ենթարկված անձանց իրավունքների վերականգնմանը.

29) *պաշտպանության կողմ* ՝ կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը.

30) *քրեական վարույթն իրականացնող մարմին* ՝ դատարանը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթում՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը.

31) *դատավարության մասնակիցներ* ՝ դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը.

32) *քրեական դատավարությանը մասնակցող անձինք* ՝ դատավարության մասնակիցները, ընթերական, դատական նիստի քարտուղարը, թարգմանիչը, մասնագետը, փորձագետը, վկան.

33) *դիմող* ՝ յուրաքանչյուր անձ, որը դիմել է դատարան, քրեական հետապնդման մարմնին՝ քրեական դատավարության կարգով խախտված իրավունքների պաշտպանության համար.

34) *միջնորդություն* ՝ կողմի կամ դիմողի խնդրանքը՝ ուղղված քրեական վարույթն իրականացնող մարմնին.

35) *բացատրություն* ՝ բանավոր կամ գրավոր փաստարկումներ, որոնք բերում են դատավարության մասնակիցները և դիմողները՝ հիմնավորելու համար իրենց կամ ներկայացվող անձի պահանջները, ինչպես նաև այլ անձանց բանավոր կամ գրավոր հաղորդումները, որոնք տրվում են մինչև քրեական գործ հարուցելը.

36) *արգելանքի վերցնել* ՝ գործողություն, որն սկսվում է անձին ազատությունից փաստացի հարկադրական զրկելու պահից՝ ձերբակալելիս, կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս, ազատազրկման ձևով դատավճիռն ի կատար ածելիս.

37) *կալանավորում* ՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելը.

38) *անազատության մեջ պահել* ՝ անձին ազատությունից հարկադրաբար զրկելը, ինչ պատճառներով էլ որ դա իրականացված լինի.

38.1) *ժամանակավոր կալանավորում* ՝անձին անազատության մեջ պահել հանձնելու վերաբերյալ միջնորդությունն ստանալու և հանձնումը բացառող հանգամանքները պարզելու նպատակով.

38.2) *հանձնելու համար կալանավորում* ՝անձին անազատության մեջ պահել նրա հանձնումն ապահովելու նպատակով.

39) *ազգականներ*՝ ազգակցական կապի մեջ գտնվող և մինչև նախապապը կամ նախատատն ընդհանուր նախնիներ ունեցող անձինք.

40) *մերձավոր ազգականներ* ՝ ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր)

եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսինը և ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը.

41) *պաշտպանյալ* ՝ կասկածյալը կամ մեղադրյալը՝ իրենց պաշտպանի համար.

42) *արդարացված* ՝ այն անձը, որի նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ, կամ որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է անմեղության հիմքով.

43) *լիազորող* ՝ տուժողը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողն իրենց ներկայացուցչի համար.

44) *Հայաստանի Հանրապետության փաստաբանների միություն* ՝ փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպություն.

45) *վնաս* ՝ դրամական չափման ենթակա բարոյական, ֆիզիկական, գույքային վնասը.

46) *բնակարան* ՝ շենք կամ շինություն, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է որոշակի անձի կամ անձանց բնակության համար, այդ թվում՝ սեփական կամ վարձակալած բնակարանը, այգետնակը, հյուրանոցային համարը, նավախցիկը, գնացքի ճամփորդախցիկը, համապատասխանաբար նրանց անմիջական հարող ծածկապատշգամբները, սանդղավանդակները, վերնասրահները, պատշգամբները, ընդհանուր օգտագործման տարածքը, ինչպես նաև դրանց այլ բաղկացուցիչ մասերը, որոնք օգտագործվում են հանգստի, գույքը պահելու, ինչպես նաև որոշակի անձի կամ անձանց այլ պահանջմունքները բավարարելու համար, բնակելի շինության նկուղը և ձեղնահարկը: «Բնակարան» հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև մասնավոր ավտոմեքենան, գետային կամ ծովային նավը, ինչպես նաև ծառայողական անձնական աշխատասենյակը և ավտոմեքենան, արվեստանոցը.

47) *այլ տեղանք* ՝ տեղանք որը գտնվում է համապատասխան դատարանի, հետաքննության մարմնի, նախաքննության մարմնի, դատախազության իրավասության և գտնվելու վայրի սահմաններից դուրս կամ քրեական դատավարությանը մասնակցող անձի բնակության վայրի սահմաններից դուրս.

48) *գիշերային ժամանակ* ՝ ժամը 22.00-ից մինչև 7.00-ը

49) Ծանուցագիր՝ թղթային կամ էլեկտրոնային փաստաթուղթ, ինչպես նաև դատական նիստի ժամանակ դատավորի կողմից արված հրապարակային հաղորդումը, որի վերաբերյալ առկա է ձայնագրություն, որով վարույթն իրականացնող մարմինն անձին հրավիրում է մասնակցելու որոշակի դատավարական գործողության կամ դատական նիստի:

50) Ծանուցում՝ դատավարական գործողություն, որով անհրաժեշտության դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը կազմակերպում է սույն օրենսգրքով նախատեսված անձանց ներկայությունը քրեական դատավարությանը:»:

«Գ Լ ՈՒ Խ 24.1
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Հոդված 174.1 Ծանուցման եղանակները

1. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է քննչական, իսկ անհրաժեշտության դեպքում նաև դատավարական գործողության կամ դատական նիստի մասին պատշաճ ծանուցել այն անձանց, ովքեր ունեն դրան մասնակցելու իրավունք կամ պարտականություն:
2. Անձի ծանուցումը կատարվում է՝
1) թղթային ծանուցագրով.
2) էլեկտրոնային ծանուցագրով.
3) ծանուցվող անձի մասնակցությամբ կատարվող դատավարական գործողության կամ ընթացող դատական նիստի ժամանակ ծանուցման մասին հայտարարելով, եթե արձանագրությունը կազմվում է էլեկտրոնային եղանակով:

Հոդված 174.2 Առանձին կատեգորիայի անձանց ծանուցման առանձնահատկությունները

1. Անչափահասը ծանուցվում է իր օրինական ներկայացուցչի միջոցով, իսկ հաստատությունում գտնվելու դեպքում՝ դրա վարչակազմի միջոցով:
2. Անազատության մեջ պահվող անձը ծանուցվում է համապատասխան վայրի վարչակազմի միջոցով:
3. Զինծառայողը ծանուցվում է զորամասի հրամանատարության միջոցով:
4. Այլ պետության տարածքում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձին, բացի սույն օրենսգրքի 174.4-րդ հոդվածով նախատեսված կարգից, թղթային ծանուցագիրը կարող է ուղարկվել նաև Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով, եթե միջազգային պայմանագրով այլ կարգով սահմանված չէ:

Հոդված 174.3 Ծանուցագրի բովանդակությունը

1. Ծանուցագրում նշվում է՝
1) հրավիրող մարմնի կամ պաշտոնատար անձի տվյալները.
2) հրավիրվող անձի անունը, ազգանունը, հասցեն և դատավարական կարգավիճակը.
3) ներկայանալու տեղը և ժամանակը (տարին, ամիսը, օրը և ժամը).
4) կատարման ենթակա քննչական կամ դատավարական գործողությունը.
5) հակիրճ տեղեկություններ հարուցված քրեական գործով վարույթի վերաբերյալ.
6) ծանուցումը ստացող անձի պարտականությունն այն հանձնելու հրավիրվող անձին.

7) անհարգելի պատճառով չներկայանալու իրավական հետևանքները, բացառությամբ սույն օրենսգրքի 448-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի.
2. Տվյալ դատավարական կարգավիճակով առաջին անգամ հրավիրվող անձին հասցեագրված թղթային ծանուցագրին կցվում է հրավիրվողի կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների ցանկը:

Հոդված 174.4 Ծանուցագիրն ուղարկելը և հանձնելը

1. Ծանուցագիրը հանձնվում է քննչական կամ դատավարական գործողության կամ դատական նիստի օրվանից ոչ ուշ, քան երեք օր առաջ: Եթե քննչական կամ դատավարական գործողությունը կամ դատական նիստը ծրագրված չէ կամ չի կարող հետաձգվել, ապա ծանուցագիրը կարող է հանձնվել ներկայանալու նախորդ օրը կամ ներկայանալուց անմիջապես առաջ՝ դրանում նշելով ծանուցագիրն ավելի վաղ չհանձնելու պատճառը:
2. Թղթային ծանուցագիրն ուղարկվում է փոստով՝ պատվիրված նամակով կամ հանձնվում է անմիջականորեն: Եթե անձն առաջին անգամ է ծանուցվում, ապա թղթային ծանուցագիրը ուղարկվում է նրա մշտական բնակության վայրի կամ հաշվառման հասցեով, իսկ եթե այն հայտնի չէ, ապա աշխատանքի, ուսման կամ ծառայության վայրի հասցեով:
3. Թղթային ծանուցագիրը ստորագրությամբ հանձնվում է անձամբ ծանուցվողին, իսկ նրա ժամանակավոր բացակայության դեպքում՝ նրա հետ բնակվող ընտանիքի չափահաս անդամներից որևէ մեկին, հարևաններին, համատիրությանը կամ փոխանցվում է նրան՝ աշխատանքի կամ ուսման վայրի վարչակազմի միջոցով: Եթե թղթային ծանուցագիրն ուղարկվել է ծանուցվողի աշխատանքի կամ ուսման վայր, ապա այն հանձնվում է համապատասխան հաստատության վարչակազմի ղեկավարին կամ իրավասու աշխատակցին, ով պարտավոր է թղթային ծանուցագիրն անհապաղ հանձնել ծանուցվողին:
4. Թղթային ծանուցագրի ստորագրության համար առանձնացված հատվածում ստացողը նշում է իր անունը, ազգանունը և ստացման ժամանակը, ինչը հաստատում է ստորագրությամբ: Եթե թղթային ծանուցագիր ստացողը ծանուցվողը չէ, ապա նա նշում է նաև ծանուցվողի հետ իր հարաբերության մասին:
5. Թղթային ծանուցագրի՝ ստորագրության համար առանձնացված մասը վերադարձվում է վարույթն իրականացնող մարմնին:
6. Էլեկտրոնային ծանուցագիրն ուղարկվում է ծանուցվող անձին այն դեպքում, երբ նա իր գրավոր համաձայնությունն է տվել էլեկտրոնային հաղորդագրության, այդ թվում՝ կարճ հաղորդագրությունը բջջային հեռախոսի կամ նամակը էլեկտրոնային փոստի միջոցով ստանալու վերաբերյալ: Էլեկտրոնային ծանուցագիրն ուղարկվում է ծանուցվող անձի նշած բջջային հեռախոսահամարին կամ էլեկտրոնային փոստին:
7. Սույն հոդվածի 6-րդ մասում նշված համաձայնությունը ստանալու դեպքում, քրեական վարույթն իրականացնող մարմինը համապատասխան անձանց

ներկայացնում է այն պաշտոնական էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը, որից կուղարկի ծանուցումը:
8.Ծանուցումը էլեկտրոնային հաղորդագրության կամ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկելու դեպքում՝ վարույթն իրականացնող մարմինը տպում և քրեական գործին է կցում էլեկտրոնային հաղորդագրությունը կամ էլեկտրոնային նամակը:
9. էլեկտրոնային ծանուցման դեպքում ծանուցվողը մեկ օրվա ընթացքում պարտավոր է հաստատել ծանուցման փաստը: Եթե ծանուցման ստացումը չի հաստատվում այն ուղարկելուց հետո երկու օրվա ընթացքում, ապա ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հանձնվում է ծանուցվողին՝ ստացականով:

Հոդված 174.5 Ծանուցագիրն ընդունելուց հրաժարվելու հետևանքները
1. Ծանուցագիրն ընդունելուց հրաժարվելը հավասարեցվում է այն հանձնված լինելուն, եթե ծանուցագիրը ստանալուց հրաժարվում է ծանուցագրի անմիջապես հասցեատերը և այդ մասին ծանուցագիր հանձնողը նշում է կատարում ծանուցագրի վրա, որը վերադարձվում է քրեական վարույթ իրականացնող մարմին:

Հոդված 174.6 Ծանուցման պատշաճությունը
1. Ծանուցումը պատշաճ է, եթե՝
1) թղթային ծանուցագիրը ստացել է անձամբ ծանուցվողը.
2) թղթային ծանուցագիրը ստացվել է ծանուցվողի կողմից նշած հասցեով.
3) թղթային ծանուցագիրը ստացողը գրավոր հաստատել է այն ծանուցվողին հանձնելու փաստը.
4) թղթային ծանուցագիրը վերադարձվել է վարույթն իրականացնող մարմնին՝ ծանուցվողի կողմից այն ընդունելուց հրաժարվելու մասին նշումով, եթե ծանուցագիրը հանձնողը վարույթով չշահագրգռված անձ է.
5) առկա է ծանուցվող անձի նշած բջջային հեռախոսահամարին կամ էլէկտրոնային հաղորդագրության միջոցին ուղարկված էլեկտրոնային ծանուցագիրը ստանալու մասին էլեկտրոնային հավաստում.
6) առկա է ծանուցվող անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկված էլեկտրոնային ծանուցագիրը ստանալու մասին էլեկտրոնային հավաստում.
7) դատական նիստում ձայնային արձանագրմամբ ամրագրվել է ծանուցման փաստը.

Հոդված 174.7 Քրեական վարույթն իրականացնող մարմնին հասցեի, բջջային հեռախոսահամարի, էլեկտրոնային հասցեի կամ էլէկտրոնային հաղորդագրության միջոցի փոփոխության մասին հայտնելու պարտականությունը
1. Ծանուցվող անձինք պարտավոր են քրեական վարույթն իրականացնող մարմնին հաղորդել գործի քննության ընթացքում նախորոք հայտնած իրենց հասցեի, բջջային հեռախոսահամարի, էլեկտրոնային հասցեի կամ էլէկտրոնային հաղորդագրության միջոցի փոփոխության մասին:

Հոդված 174.8 Ներկայանալու պարտականությունը և կանչով չներկայանալու հետևանքները

1. Պատշաճ ծանուցմամբ հրավիրված անձը պարտավոր է դատավարական գործողության կատարման վայր կամ դատական նիստի ներկայանալ նշանակված ժամին կամ վարույթն իրականացնող մարմնին նախապես իրազեկել չներկայանալու պատճառների մասին:

2. Անհարգելի պատճառով չներկայացած անձի նկատմամբ կարող են կիրառվել սույն օրենսգրքով նախատեսված հարկադրանքի միջոցներ:»: